Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
2019թ. հոկտեմբերի 25-ի
թիվ 1565 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ /ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ/ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 95-3.3-Ղ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է մարզպետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք.Վանաձոր, Հայքի հրապարակ 1

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերի օտարման և օգտագործման տրամադրման աշխատանքները
2. իրականացնում և ապահովում է մարզի հողերի օգտագործման սխեմաներում փոփոխություն կատարելու աշխատանքները
3. իրականացնում և ապահովում է մարզի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները
4. ապահովում է մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման, հողերի պահպանության, նոր հողերի յուրացման, հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ապօրինի հողօգտագործման կանխման, կասեցման և վերացման աշխատանքները:
5. իրականացնում է վերահսկողություն հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ
6. ապահովում է մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանումը
7. ապահովում և իրականացնում է հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի, հողերի միավորման, բաժանման և կոնսոլիդացիայի նախագծերի, ինչպես նաև ոլորտի նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները
8. ապահովում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբախշման նպատակային ծրագրերի մշակման աշխատանքները
9. ապահովում է մարզի տարածքում չօգտագործվող, անարդյունավետ օգտագործվող կամ իրենց նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի գույքագրման և հաշվառման աշխատանքները
10. ապահովում և իրականացնում է Հողային օրենսդրության պահանջների կատարումը խախտողներին օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով վարչական

պատասխանատվության ենթարկելու գործընթացը
11. ապահովում է համայնքներում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց գյուղատնտեսական նշանակության հողամասից կամովին հրաժարված հողամասերի պետական գրանցման աշխատանքները
12. ապահովում է մարզում հողերի հողատեսքերի փոփոխության աշխատանքները
13. ապահովում է մարզի պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտաեսական նշանակության հողերը վարձակալությամբ տրամարդման աշխատանքները
14. ապահովում է հողաշինության գծով քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական աշխատանքների իրականացումը
15. ապահովում և իրականացնում է մարզպետարանի աշխատանքային ծրագրի հողաշինության և հողօգտագործման հատվածը:
16. Ներկայացնում է առաջարկություններ իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ:

Իրավունքները՝

1. ուսումնասիրել և քննարկել հողաշինարարական գործը,տալ համաձայնություններ
2. համայնքներից ստանալ և ուսումնասիրել հողաշինարարական գործը
3. ստանալ համայնքներից հողի բաշխվածության մասին տեղեկատվությունը
4. իրականացնել վերահսկողություն մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման, հողերի պահպանության, նոր հողերի յուրացման, հողային օրենսդրության պահանջների պահպանման, ապօրինի հողօգտագործման կանխման, կասեցման և վերացման նկատմամբ
5. ուսումնասիրել ու վերլուծել Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը
6. ունենալ հողամասի հատակագիծը օգտագործման համար սահմանված մասշտաբով գծված հողամասի տեղագրական գծագիրը (քարտեզը) և ուսումնասիրել մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի առկայությունը
7. համայնքներից ստանալ առաջարկություններ հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի, հողերի միավորման, բաժանման և կոնսոլիդացիայի նախագծերի վերաբերյալ
8. համայնքներից ստանալ առաջարկություններ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբախշման նպատակային ծրագրերի վերաբերյալ և մշակել դրանք
9. ուսումնասիել և վերլուծել մարզի տարածքում հողերի չօգտագործման, անարդյունավետ օգտագործման կամ նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործման պատճառները
10. կազմակերպել մարզում հողերի հողատեսքերի փոփոխության աշխատանքները
11. իրավասու մարմնից ստանալ և վերլուծել համայնքների էլեկտրոնային քարտեզները
12. ներկայացնել առաջարկություններ իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ:

Պարտականությունները՝

1. հողաշինարարական գործը ներկայացնել համապաստասխան անձանց կարծիքի և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ քննարկման
2. կազմել և ստանալ մարզի տարվա հողային հաշվեկշիռը
3. կազմել արձանագրություն,ներկայացնել առաջարկություն մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման, հողերի պահպանության, նոր հողերի յուրացման,

հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ խախտումների վերաբերյալ,կանխել, կասեցնել և վերացնել ապօրինի հողօգտագործումը
4. կայացնում է համապատասխան որոշումներ Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունքների վերաբերյալ
5. Ապահովել մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանումը:
6. ներկայացնել հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրեր, հողերի միավորման, բաժանման և կոնսոլիդացիայի նախագծեր
7. ներկայացնել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբախշման նպատակային ծրագրեր
8. ներկայացնել արձանագրություն,առաջարկություններ,տեղեկանք
9. ներկայացնել մարզպետին և այլ իրավասու մարմիններին Հողային օրենսդրության պահանջների կատարումը խախտողներին օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան առաջարկություններ
10. ներկայացնել համայնքներում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց գյուղատնտեսական նշանակության հողամասից կամովին հրաժարված, սակայն համայնքային սեփականության իրավունքները չձևակերպված հողամասերի ամփոփ տեղեկատվությունը
11. ներկայացնել տեղեկատվություն մարզում հողերի հողատեսքերի փոփոխության վերաբերյալ
12. ներկայացնել տեղեկատվություն մարզի գյուղատնտաեսական նշանակության հողերը վարձակալությամբ տրամարդման աշխատանքների վերաբերյալ
13. մարզի համայնքներին տրամադրել քարտեզներ
14. ներկայացնել աշխատանքային ծրագիրը
15. Գնահատել ենթակա աշխատողների կողմից կատարված աշխատանքները.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.**3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ «Երկրաբաշխության, քարտեզագրության և տեղանքագրության» բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաները

ընդհանրական կոմպետենցիաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5.Խնդրի լուծում
6.Բարեվարքություն

ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2.Բանակցությունների վարում
3.Փոփոխությունների կառավարում
4.Տարածքային կառավարում
5.Կոնֆլիկտների կառավարում

6.Բողոքների բավարարում
7.Հասարակության հետ կապերի ապահովում
8.Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
9.Ժամանակի կառավարում
10.Փաստաթղթերի նախապատրաստում

4 Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:
4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:
4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:
4.4. Շփումները և ներկայացուցչությունը
Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:
4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՀՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ